

Ս Ի Ո Ն

Ժ. Գ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1939

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

ԹԻԻ 9

Ա. Մ. Ե. Ն. Ս. ՊԱՏՐԻԱՐԳ ԶՕՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ
Ա. Մ. Ե. Ն. ԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱԼ
Ա. Մ. Ե. Ն. Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿԱՊՈՍԻ
1 ՅՈՒՆԻՍ ԹՈՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԻՆ

16 Օգոստոս 1939

8904 - 27

Ամենապատիւ

Տ. Գեորգ Ս. Արքեպիսկոպոս Զորեչեան,
Տեղակալ Աթոռիկոսութեան Ամենայն Հայոց,
Ս. Էջմիածին

Մեծ հաճութեամբ ընդունեցանք Ամենապատիւութեանդ տարւոյ Յունիս 1 բուսկի եւ Թիւ 108 պատասխանագիրը, որով մեր Մայիս 3 բուսկի գրութեամբ արժարձած խնդրին կողմնակի իմաստը ըմբռնելի եւ օգտագործելի դասելով հանդերձ՝ անմիջական իմաստի նկատմամբ առ այժմ իրական միջոց նշել անկարելի կը համարէիք:

Այս տղերու մեր վերայ թողած ոչ այնքան յուսադրական տպաւորութիւնը մասամբ մեղմացաւ, երբ թերթերու մէջ երեւցաւ Ամերիկահայոց Առաջնորդ Գերաւեմորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանի հաւատարմեայ ժողովուրդին ուղղեալ տարւոյ 19 Յունիս, Թիւ 104 յայտարարութիւնը, որով կը հաղորդէր պարունակութիւնը Ձեր Ամենապատիւութեան իր ընդունած երկու մասնաւոր նամակներուն, ուր ի միջի այլոց յայտնած էիք՝ թէ Կաթողիկոսութեան ընտրութեան հարցը պաշտօնական ընթացքի մէջ է. դիմում ներկայացուած է Խորհրդային Հանրապետութեան Վերադաս Մարմիններուն, եւ Ձեր Ամենապատիւութիւնը այն համոզումը ունի, որ դրական արգիւնք պիտի ունենայ եւ պիտի կարենաք մերձաւոր ապագային ուրախաւոր լուր հաղորդել ի մխիթարութիւն եւ յուրախութիւն Սփիւռքի Հայութեան, եւ թէ՛ այս հարցի դրական լուծման նկատմամբ մեծ վստահութիւն ունիք Կեդրոնական Վարչութեան վրայ, նկատի առնելով վերջինիս բռնած դրական վերաբերմունքը անցեալ ընտրութեան ժամանակ:

Ձեր Ամենապատիւութեան սոյն հաղորդագրութիւնը յոյսի եռոյյ մը եղաւ եւ անսահման ուրախութիւն պատճառեց թէ՛ մեզ, եւ թէ՛ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի գերազանցութեան ու Անոր հոգեւոր բարձր իրաւասութեան նախանձախնդիր Սփիւռքի բովանդակ Հայութեան: Կը յուսանք թէ, Խորհրդային Հանրապետութեան բարեսցական աջակցութեամբ, ոչ շատ ժամանակէն իր ցանկալի լուծումը կը ստանայ Հայց. եկեղեցւոյ Նախապետութեան վերաբերմամբ այս յոյժ կենսական եւ անյետաձգելի հարցը եւ Հայ Ժողովուրդը երջանիկ բախսը կ'ունենայ ի մօտոյ ողջունելու իր արժանընթիւ Հայրապետ Ս. Լուսաւորչի Արքունի վրայ:

Պատասխանելով Ձեր գրութեան երկրորդ մասին, կուզանք թեղեկացնել հետեւեալը: Մեր երանաւորին Նախորդը՝ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք ժամանակին ընդունած է հանգուցեալ եղանակաբանակ չափապիտի 1937 Օգոստոս 1 թուականի եւ թիւ 417 եւ 418 հոմալակները, եւ չայոց նկեղեցւոյ Բարեկարգութեան Մրագիրը, մեականւած եւ ընդունուած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն, ու ապա՝ Ազգային — Նկեղեցական Ժողովէն:

Հանգուցեալ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք՝ Հայրապետական Կոնդակը, եւ Բարեկարգութեան Մրագիրը բազմաթիւ օրհանկներով զպարել տուաւ, եւ իր 30 Սեպտեմբեր 1937 թուականի մասնաւոր Շրջաբերականով զրկեց Սիիւռի բոլոր թեմական Առաջնորդներուն, Փոխանորդներուն եւ Հոգեւոր Հովուութեանց, յանձնարարելով՝ որ հանեն զանոնք յառեան Վարչական Խառն Ժողովներու ի գործադրութիւն պարտ ու պատշաճին:

Հանգուցեալ Ս. Պատրիարքը այդ Շրջաբերականով միեւնոյն ժամանակ հրահանգեց, որ գործը արժանի ուսումնասիրութեան ենթարկուելու համար, լուսադոյն պիտի լինի, որ անոր նախաճիւղները կատարելու եւ ըստ այնմ թեղեկագիր պատրաստելու համար, նոյնինքն Թեմական Ժողովներու եւ կամ, եթէ այս վերջիններս պատշաճ դասեն, Խառն Ժողովներու միջոցաւ ընտրուած մասնաւոր Ժողովներու յանձնուին Կոնդակն ու Մրագիրը կամ Ձեկուցումը, եւ յետոյ, այդ Յանձնաժողովներէն մասնացում թեղեկագրին ծանօթանալի վերջ, Թեմական Ժողովները, յիս խորհրդակցութեան, բանաձեւեն իրենց եզրակացութիւնները ու ամփոփեն մասնաւոր թեղեկագրի մը մէջ:

Այդ Շրջաբերականով Առաջնորդներուն եւ Ժողովներուն կը թելադրէր նաեւ՝ Յանձնաժողովներու անգամակցութեան հրաւիրել հաւաստի, զգացման, եւ կօծական ու եկեղեցական հմտութեան սէր անձինքն եւս:

Ի պատասխան վերոյիշեալ Շրջաբերականին՝ հասած են տասներկն գրութիւններ: Անոնց մէջ երկու Թեմական Առաջնորդներ եւ չորս Հովիւներ տուած են իրենց կարծիքը: Տասներեւեկը կը յայտնէր քի ընտրած են եւ կամ պիտի ընտրեն Յանձնաժողովներ որպէսզի ուսումնասիրեն Ձեկուցումը եւ հազորդեն իրենց եզրակացութիւնը: Երկուր՝ Կոնդակն ու Ձեկուցումը ընդունած լինելին միայն կը յայտնեն:

Իսկ Կ. Պոլսոյ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Նարոյեան Պատրիարք իր պատասխանագրով կը զրկէ 1910—14 տարիներու տրամիւն, Նկեղեցական Բարեկարգութեան խնդրոյն առթիւ, Պատրիարքարանէն Թեմներու եւ Կ. Պոլսոյ հոգեւորականաց ուղղեալ Շրջաբերականի հարցառման եւ իրենց պատասխանագրերու թրքածարը, որ 1914 էն առաջ գրեթէ ամբողջ քրահայ Նկեղեցականութեան կարծիքն ու բաղձանքը կը ներկայացնէ, եւ կը գրէ թէ այդ թրքածարը կարող է դիւրացնել իրեն՝ Տ. Թորգոմ Ս. Պատրիարքի կազմելիք ընդհանուր Նկեղեկագրի պատրաստութիւնը:

Կարեւոր կը համարինք յիշել նաեւ՝ թէ հանգուցեալ Ս. Պատրիարք Ս. Արուստայ Պատրիարքին՝ Սիւնի մէջ, 1937 եւ 1938 տարիներուն, տասներեւեկ խմբագրական յօդուածներով հրատարակեց Բարեկարգական հարցին վերաբերմամբ Ս. Էջմիածնի Մրագրի մասին իր ուսումնասիրութիւնը եւ իր հեղինակաւոր կարծիքն ու եզրակացութիւնը: Նրէ Ձեր Ամենապատուութիւնը կը փափաքի, պատրաստ ենք այդ յօդուածներու կտրուկները ուղարկել:

Նկեղեցական Բարեկարգութեան մասին 1910 թուականէն ի վեր յայտնուած կարծիքները ուսումնասիրութեամբ քննել եւ եզրակացութիւններ ամփոփելը ընդարձակ ժամանակի եւ աշխատութեան կը կարօտի: Ի պահանջել հարկին կարելի է մեր բանիմաստ միաբաններէն Յանձնախումբ մը նշանակել այստեղ՝ կատարելու համար այդ աշխատանքը:

Մեր եւ Միաբանութեան կողմէ սիրոյ եւ յարգամանք ողջոյններ Ձեր Ամենապատուութեան, եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Մայր Աթոռի Միաբանութեան Միաբանութեան եւ Բարձրագոյն բոլոր անդամներուն:

Աղօթակից

ՊԱՏՐԻԱՐԿ ԵՐՈՒՍԱԼԱՅԻՄ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ